ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ ՓԲԸ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ARMENIA TV JOINT-STOCK COMPANY
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ 375054 ՎԵԳ ՎԱՐԴՈՒՂԻ 1
REPUBLIC OF ARMENIA, YEREVAN, 375054 YEG VARDHIGIWAY 1
Tel. +(37410) 36 72 44 Fax +(37410) 36 68 52

ARMENIA
TV Company

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊՐՆ. Գ.ԱՄԱԼՅԱՆԻՆ.

«05» մարտի 2012թ.

Հարգելի պարոն Ամալյան,

"Արմենիա" հեռուստաընկերությունը, կից Ձեզ է ներկայացնում ՀՀ Ազգային ժողովի 2012թ. մայիսի 6-ին կայանալիք հերթական ընտրությունների կապակցությամբ իր եթերում հրապարակված հայտարարության տեքստը և վերջինիս ձայնագրությունը.

"Հիմք ընդունելով ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի դրույթները և ապահովելով թեկնածուների, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար ոչ խտրական պայմաններ՝ "Արմենիա" հեռուստաընկերությունը հրապարակում է ՀՀ Ազգային Ժողովի 2012 թվականի մայիսի 6-ին կայանալիք ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում թեկնածուներին, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին տրամադրվող եթերաժամի մասին տեղեկատվությունը:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում թեկնածուներին, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին տրամադրվող վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը սահմանվում է 110 000 /հարյուր տաս հազար / ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Յուրաքանչյուր թեկնածուին, կուսակցությանը կամ կուսակցությունների դաշինքին, նախընտրական քարոզչության ամբողջ ժամանակահատվածում, ամեն օր ժամը 18:00-ից մինչև 20:00, կարող է տրամադրվել առավելագույնը 6 րոպե եթերաժամանակ:"

Առդիր՝ 1 /մեկ/ սկավառակ:

Գլխավոր տնօրեն՝ Ա. Ավետիսյան

«ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» «АРМЕНИЯ ТИ-ВИ» «ARMENIA TV»

ՄՈՒՏՔ № 96
05 03 2012